ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գևորգ Իսրայելյան
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի
և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ որպես հանցավորության կանխարգելման մասնագիտացված սուբյեկտի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրահանգելու, որ իրավապահ այդ մարմինն իրականացնում է հանցագործությունների հատուկ, անհատական և վիկտիմոլոգիական կանխարգելում: Ոստիկանությունը չի իրականացնում հանցավորության ընդհանուր կանխարգելում, քանի որ գործունեության այդ ուղղությունն անմիջականորեն նպատակ չի հետապնդում կանխարգելել հանցավորությունը, ներառում է հեռանկարային տարաբնույթ՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական և այլ միջոցառումներ, որոնք վերացնում կամ չեզոքացնում են հանցավորության ընդհանուր պատճառները: Վերջինները ոչ թե հանգեցնում, այլ միայն հանցագործությունների կատարման պայմաններ են ստեղծում[1]:

Մեր հետազոտությունների արդյունքները փաստում են, որ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից իրականացվող հանցավորության կանխարգելման գործընթացի իրավական կարգավորումը հաճախ թերի է, ոչ ամբողջական, իսկ երբեմն նաև՝ հակասական: Ստորև ներկայացվում են ոստիկանության կանխարգելիչ գործունեության հիմնարար իրավական հիմքերում տեղ գտած թերությունները, բացթողումները և դրանց վերացմանն ուղղված մեր առաջարկությունները:

2001 թվականի ապրիլի 16-ին ընդունված «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի[2] 2-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետը որպես

---

[1] Տե՛ս **Мартыненко О. А.** Детерминация и предупреждение преступности среди персонала органов внутренних дел Украины: Монография. – Харьков: Изд-во ХНУВС, 2005 //http://www.alpravo.ru/library/doc6187p0/instrum6188/item6218.html (վերջին այցելություն 02.05.2015), **Раска Э. Э.** Борьба с преступностью и социальное управление: Теоретические и методические аспекты. Таллин: Ээсти раамат, 1985, էջեր 93-94, Մովսիսյան Վ. Իրավապահ մարմինների կողմից իրականացվող կանխարգելման միջոցները անզգուշությամբ մահ պատճառելու վերաբերյալ //Օրենք և իրականություն, 2009, №6 (164), էջ 15, **Жалинский А. Э.** Специальное предупреждение преступлений в СССР (Вопросы теории), Львов. 1976, էջեր 85-86:

[2] Տե՛ս ՀՀՊՏ 2001.05.31/15(147):

ոստիկանության խնդիր նախատեսում է հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը: Նախականխումը (պրոֆիլակտիկան) հնարավոր հանցագործության պատճառների և պայմանների նկատմամբ ներգործությունն է: Կանխումը մտահղացվող և նախապատրաստվող հանցագործությունների զարգացումը խոչընդոտելն է: Խափանումը արդեն սկսված (փորձի փուլում) հանցագործությունը շարունակելը խոչընդոտելն է[1]: Նախականխումը, կանխումը և խափանումը հանցավորության հատուկ կանխարգելման ուղղություններն են: Մասնագիտական գրականության մեջ հատուկ կանխարգելումը բնութագրվում է որպես հանցագործությունների պատճառների, պայմանների և այլ դետերմինանտների, դրանց հետ կապված բացասական սոցիալական երևույթների բացահայտմանը և վերացմանը (մեկուսացմանը, չեզոքացմանը) ուղղված միջոցների ամբողջություն: Այն կոչվում է հատուկ, քանի որ նպատակաուղղված է հանցագործությունների կանխարգելմանը, հաճախ պահանջում է հատուկ գիտելիքներ, իրականացվում է մասնագիտացված սուբյեկտների կողմից[2]:

Ակնհայտ է, որ օրենսդիրը ոստիկանության խնդիրների թվին չի դասել հանցագործությունների անհատական և վիկտիմոլոգիական կանխարգելումը: Մինչդեռ որոշ ենթաօրենսդրական ակտեր (օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվականի N 1254-Ն որոշման հավելվածի 26-35-րդ կետեր, 24-րդ կետի 8-րդ ենթակետ և այլն) ոստիկանության իրավասությանն են վերապահում անհատական և վիկտիմոլոգիական կանխարգելման գործառույթների իրականացումը: Իրավական կարգավորման նշված թերությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է.

1. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) հանցագործությունների և վարչական իրավախախտումների հատուկ, անհատական և վիկտիմոլոգիական կանխարգելումը»:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 29 ապրիլի 2004 թվականի N 806-Ն որոշման[3] հավելվածի 7-րդ կետի (սահմանում է ոստիկանության խնդիրներն ու նպատակները) «գ)» ենթակետը (հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման և խափանման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը) շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) հանցագործությունների և վարչական իրավախախտումների հատուկ, անհատական և վիկտիմոլոգիական կանխարգելման կազմակերպումն ու իրականացումը»:

---

[1] Տե՛ս Профилактика правонарушений. Сост. Р. В. Шагиева. Издательство Казаньского университета, Казань, 1989, էջեր 20-21:

[2] Տե՛ս **Герасимов С. И.** Концептуальные основы и научно-практические проблемы предупреждения преступности. Автореф. дисс. …канд. юрид. наук. М., 2001, էջեր 28-29:

[3] Տե՛ս ՀՀՊՏ 2004.06.23/33(332):

3. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 29 ապրիլի 2004 թվականի N 806-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի (սահմանում է ոստիկանության գործառույթները) «ը)» ենթակետը, որը նախատեսում է «հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխման, կանխման և խափանման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայությունների ու տարածքային մարմինների կողմից կանխարգելիչ գործունեության ապահովում, ինչպես նաև հանցագործությունների պատճառների և նպաստող պայմանների վերհանում, ուսումնասիրություն ու դրանց վերացման համար միջոցների ձեռնարկում», շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) հանցագործությունների և վարչական իրավախախտումների հատուկ, անհատական և վիկտիմոլոգիական կանխարգելման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայությունների ու տարածքային մարմինների կողմից կանխարգելիչ գործունեության ապահովում»: Ակնհայտ է, որ նշված իրավական ակտի հավելվածի 8-րդ կետի «ը)» ենթակետում ամրագրված «… ինչպես նաև հանցագործությունների պատճառների և նպաստող պայմանների վերհանում, ուսումնասիրություն ու դրանց վերացման համար միջոցների ձեռնարկում» ձևակերպումը տեղին չէ, քանի որ թվարկված գործողությունները առնվում են հատուկ կանխարգելման մեջ:

4. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվականի N 1254-Ն որոշման[1] հավելվածի 7-րդ կետի (համայնքային ոստիկանության գործունեության նպատակները) 2-րդ ենթակետը (հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը) շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2) հանցագործությունների և վարչական իրավախախտումների հատուկ, անհատական և վիկտիմոլոգիական կանխարգելումը», և միաժամանակ ուժը կորցրած ճանաչել 4-րդ ենթակետը, քանի որ դրանով սահմանվող միջոցները (իրավախախտումները ծնող պատճառների և պայմանների վերհանումը, դրանց վերլուծությունը, իրավախախտումները ծնող պատճառների և պայմանների վերացման միջոցառումների մշակումը), ինչպես վերը նշվեց, ընդգրկվում են հատուկ կանխարգելման մեջ:

Իրավական ակտերում կարելի է հանդիպել կարգավորման այնպիսի թերության, ինչպիսին է հանցավորության կանխարգելման տարբեր ուղղությունների նույնացումը: Այսպես, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվականի N 1254-Ն որոշման հավելվածում հանցագործությունների և վարչական իրավախախտումների անհատական կանխարգելումը նույնացվում է նախականխման հետ: Նույնաբանությունից խուսափելու համար սույն հոդվածի շրջանակներում չեն քննարկվի այս թերութ-

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2014.11.19/63(1076).1:

յան վերացման, ինչպես նաև հանցագործությունների անհատական կանխարգելման իրավական կարգավորման կատարելագործման այն խնդիրները, որոնց անդրադարձ է կատարվել է մեր նախորդ հետազոտություններում[1]:

Իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ համայնքային ոստիկանության կողմից հաշվառման մեջ գտնվող անձը փոխում է մշտական բնակության վայրը, և առաջանում է նման անձին տվյալ ստորաբաժանման հաշվառումից հանելու հարցը: «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվականի N 1254-Ն որոշման հավելվածի 29-րդ կետը, որը նախատեսում է անձին հաշվառումից հանելու հիմքերը, քննարկվող հարցի շուրջ լռում է: Այս կապակցությամբ առաջարկում ենք որոշման հավելվածի 29-րդ կետում կատարել լրացում. «5) մշտական բնակության վայրը փոխելու դեպքերում»:

Մեր տեսադաշտում է հայտնվել իրավիճակ, որի պարագայում իրավաբանական ուժով ցածր իրավական ակտի որոշ դրույթներ հակասում են իր համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի առանձին դրույթների: Այսպես, «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց վարման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 11-Ա հրամանի հավելված 3-ի (սահմանում է համայնքային ոստիկանության ծառայողների կողմից փաստաթղթերի վարման կարգը) 3-րդ կետը նախատեսում է, որ ոստիկանության բաժնի միասնական հաշվառման մատյանը «…վարվում է համայնքային ոստիկանության բաժանմունքի պետի (խմբի ղեկավարի) կողմից:»: Մինչդեռ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվականի N 1254-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 4-րդ ենթակետը նշված գործառույթի իրականացումը վերապահում է համայնքային ոստիկանության բաժանմունքի պրոֆիլակտիկայի ավագ տեսուչի իրավասությանը: Այս հակասությունը վերացնելու համար անհրաժեշտ է վերը նշված հրամանի հավելված 3-ի 3-րդ կետում «…պետի (խմբի ղեկավարի)…» բառերը փոխարինել «…պրոֆիլակտիկայի ավագ տեսուչ…» բառերով:

Իբրև ամփոփում նշենք, որ հանցագործությունների կանխարգելման իրավական հիմքերի ստեղծման գործում թերություններից և բացթողումներից խուսափելու համար անհրաժեշտ է.

---

[1] Մանրամասն տե՛ս **Իսրայելյան Գ.** Համայնքային ոստիկանության գործառույթները հանցագործությունների անհատական կանխարգելում իրականացնելիս //Պետություն և իրավունք, № 1 (67), 2015, էջեր 41-47:

1. Ընդունել «Հանցագործությունների կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի նախագծի մշակումը՝ որպես միջոցառում, նախատեսված է դեռևս 2008 թվականի մարտի 27-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1039-Ն որոշման[1] հավելված 1-ի 10-րդ կետում:

2. Հետևողականորեն իրականացնել իրավական ակտերի պետական իրավական փորձաքննությունը: 2002 թվականի ապրիլի 3-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի[2] 31-րդ հոդվածի առաջին մասը նախատեսում է. «Իրավաստեղծ մարմին ներկայացված իրավական ակտի նախագծի որակի գնահատման նպատակով իրավաստեղծ մարմնի որոշմամբ կարող է իրականացվել անկախ պաշտոնական (իրավաբանական, ֆինանսական, գիտատեխնիկական, բնապահպանական, լեզվաոճական և այլ) փորձաքննություն»: Կարելի է ենթադրել որ իրավական ակտերի նախագծերը կարող են ենթարկվել նաև քրեաբանական (կրիմինոլոգիական) փորձաքննության[3]: Փորձաքննության այս տեսակով հնարավոր է որոշել իրավական ակտի նախագծի դրույթների քրեածին կամ հակաքրեածին, վիկտիմածին կամ հակավիկտիմածին բնույթը, ինչպես նաև հանցագործությունների կանխարգելման իրավական ապահովման որակը:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СФЕРЕ ПРЕДОТВРАЩЕНИЯ ПРЕСТУПНОСТИ

Геворг Исраелян
Кандидат юридических наук,
Начальник кафедры гражданского права и
гражданского процесса юридического факультета
Академии Образовательного комплекса полиции РА,
Подполковник полиции

Статья посвящена некоторым проблемам правового регулирования предотвращения преступлений, осуществляемого Полицией Республики Армения. Результаты исследования автора свидетельствуют о том, что процесс правового регулирования предотвращения преступлений имеет существенные недостатки. Автор анализирует некоторые правовые основы предупредительной деятельности полиции, указывает на недостатки правового регулирования и выносит предложения, направленные на устранение этих недостатков.

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2008.10.01/60(650):
[2] Տե՛ս ՀՀՊՏ 2002.05.21/15(190):
[3] Մանրամասն տե՛ս **Бородин С. В., Лунеев В. В.** О криминологической экспертизе законов и иных нормативных актов //Государство и право. 2002. № 6, էջեր 42-43:

ISSUES ON IMPROVEMENT OF LEGAL REGULATION OF ACTIVITIES OF THE POLICE OF THE REPUBLIC OF ARMENIA TOWARDS CRIME PREVENTION

Gevorg Israyelyan
Candidate of Legal Sciences
Head of the Department of Civil Law and Civil Procedure
Law Faculty of the Academy of the Police Educational
Complex of the Republic of Armenia
the Police Lieutenant Colonel

The article is devoted to improvement of legal regulations of the activities of the Police of the RA police as a specialized subject of crime prevention. The author's research gives evidence that the process of crime prevention realized by the RA police is often imperfect, incomplete and sometimes contrastive as well. The author analyzes basic legal basis of preventive activities of the police, indicates shortcomings in them and interprets suggestions on shortcoming removal.

Բանալի բառեր - *ոստիկանություն, հանցագործությունների կանխարգելում, հանցագործությունների հատուկ կանխարգելում, հանցագործությունների անհատական կանխարգելում, հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելում, հանցագործությունների կանխարգելման իրավական կարգավորում, «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:*

Ключевые слова: *полиция, предотвращение преступлений, специальное предотвращение преступлений, индивидуальное предотвращение преступлений, виктимологическое предотвращение преступлений, правовое регулирование предотвращения преступлений, Закон Республики Армения «О полиции».*

Key words: *police, crimes prevention, special prevention of crimes, individual prevention of crimes, victimological prevention of crimes, legal regulation of crimes prevention, the RA law «On police».*